ՆԵՐՍԷՍ ԱԲ. ԿՐԱԿՑԻ.— Մբ. Ս. Հրեշտակապետի վանքին մէջ ընդօրինակած է երկու ձեռագիր մին՝ պարզ ճառընտիր մը, 1331ին. և միւսն՝ դարձեալ ճառընտիր և Տօնականի ձագ 1335ին. առաջինը Վարդան Արևելցի պատրիարքին օրով, երկրորդը՝ ա-նոր յաջորդ՝ Յովհաննէս Ճօսլինի. իսկ երրորդ ձեռագիր մը, ճաշոց խորագրով, ընդօրինակած է 1334ին Ս. Ստեփանոս վանքին մէջ։ Առաջին և երրորդ ձեռագիրները կը գտնուին Ս. Յակոբի վանքին մէջ (ՄՁ. Թ. 282 և 1863). իսկ երկրորդը կը մնայ Վենետիկի Մխիթարեանց մատենադարանը։ Կրակ-ցիին կենսագրութեան մասին տեսնել ա՛յն յիշատակարանները որ արդէն հրատարակուած են (Սրգս. Ցուց. հատ. բ. էջ 350. Միսուրան, էջ 317—320 և 547, մեր յօդուածը Ներսես Կրակցի խո-րագրով, Սիոն, 1627, էջ 32—55)։

ՆԵՐՍԷՍ ԱԲ. ՂԱՓԱՆՑԻ.— Մբ. 1699ին կը յիշատակուի Մինաս Ամդեցիի Օրագրութեան մէջ։

ՆԵՐՍԷՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ.— Ղազար Անձևացին՝ Հաւաքարան անուանց կաթողիկոսաց 1824ի իր ձեռագիրին յիշատակարա-նին մէջ կը գրէ թէ Աղթամարի կաթողիկոսներու յաջորդու-թիւնն պարունակող երեք տետրակներ գտած է նոյն վանքի մատենադարանին մէջ, նոյն տետրակներուն երրորդը գրած է հնուս երաժիշտ և հռետոր Ներսես Աղթամարցին։ Ղազար Անձևացի-ին յիշատակարանէն կը հասկցուի թէ՝ Ներսէս Աղթամարցին 1791ին ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ և իր ձայնին քաղցրութեամբն ու երաժշտական ճարտարութեամբն ուխտաւորները և օտարները հիացնելէ վերջ կը դառնայ հայ-րենիքը, Անձևացիին յիշատակարանին խօսքերը նոյնութեամբ կ'ընդօրինակենք հոս. «.... այս Ներսէս էր այր յոյժ հռետոր և տեղեակ արտաքին փիլիսոփայական արհեստին. մանաւանդ երաժշտականացն, այնպէս զի մինչ տարածեալ համբաւ սորա ընդ ամենայն աշխարհս, զի էր հիանալի և զարմանալի, գրեթէ հրեշտակաց եղանակ ունէր։ Արդ ի գնալ նորա ի սուրբ Երու-սաղէմ յերկրպագութիւն Գերեզմանին Քրիստոսի. ոչ ետ ծա-նօթութիւն ամենագով Յովակիմ պատրիարքին միչև յաւուրս Ծննդեան և Յայտնութեան Քրիստոսի. ի յառաւօտեան ժամուն, յորժամ սկսեցին զՏեր զի քազում և հասան մինչև ցՓառք ի քար-